**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 14**
**ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի 2026թ. օգոստոսի 31-ի նիստի (հարցման կարգով)**

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի հերթական N14 նիստի կայացման համար իրականացվել է էլեկտրոնային հարցում՝ ս.թ. օգոստոսի 28-ից 31-ը: Խորհրդի 32 անդամները էլեկտրոնային ծանուցմամբ ստացել են նիստի օրակարգը (օրակարգը կցվում է), գիտական թեմաների կատարման 2025-2026թթ. հաշվետվությունները և մրցույթին ներկայացված հայտերը (ներառյալ՝ հայտատուների տվյալները և հետազոտական նախագծերի հակիրճ նկարագրությունը):

**ՕՐԱԿԱՐԳ**

**1.1** ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի «Հեռավար լաբորատորիաների հիմնադրում 2024» դրամաշնորհի շրջանակներում «Մարդկային կապիտալի կառավարման հիմնահարցերը և լուծման ուղիները ՀՀ-ում» գիտական թեմայի (ղեկավար՝ տ.գ.թ., դոցենտ Կառլեն Գագիկի Խաչատրյան) կատարման 2025-2026թթ. հաշվետվության մասին հարցը:

**1.2** ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի «Հեռավար լաբորատորիաների հիմնադրում 2024» դրամաշնորհի շրջանակներում «Մարդ-համակարգիչ փոխազդեցություն և ուսումնառություն» գիտական թեմայի (ղեկավար՝ տ.գ.թ., ասիստենտ Ենոք Բենիամինի Հակոբյան) կատարման 2025-2026թթ. հաշվետվության մասին հարցը:

**2.1** ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի «Դոկտորական հետազոտությունների աջակցության ծրագիր - 2026» դրամաշնորհի մրցույթին ֆակուլտետի 3-րդ տարվա առկա ուսուցմամբ ասպիրանտ Արման Մանվելի Բաբայանի հայտի երաշխավորման մասին հարցը:

**2.2** ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի «Դոկտորական հետազոտությունների աջակցության ծրագիր - 2026» դրամաշնորհի մրցույթին ֆակուլտետի 2-րդ տարվա հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Անահիտ Վահագնի Խեքոյանի հայտի երաշխավորման մասին հարցը:

Էլեկտրոնային հարցման արդյունքներն ամփոփել են խորհրդի նախագահ դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ. Խաչատրյանը, խորհրդի քարտուղար տ.գ.թ., դոցենտ Հ. Մարգարյանը: Խորհրդի 32 անդամներից 30-ը մասնակցել են էլեկտրոնային

հարցմանը: Գրանցված ցուցանիշը բավարար հիմք է գիտական խորհրդի N14 նիստի օրակարգային հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելու համար:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հիմք ընդունելով էլեկտրոնային հարցման արդյունքները՝

**1.1** Հավանություն տալ «Մարդկային կապիտալի կառավարման հիմնահարցերը և լուծման ուղիները ՀՀ-ում» գիտական թեմայի (ղեկավար՝ տ.գ.թ., դոցենտ Կառլեն Գագիկի Խաչատրյան) կատարման 2025-2026թթ. հաշվետվությանը և գնահատել դրական (30 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

**1.2** Հավանություն տալ «Մարդ-համակարգիչ փոխազդեցություն և ուսումնառություն» գիտական թեմայի (ղեկավար՝ տ.գ.թ., ասիստենտ Ենոք Բենիամինի Հակոբյան) կատարման 2025-2026թթ. հաշվետվությանը և գնահատել դրական (30 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

**1.3** «Մուլտիմոդալ արհեստական բանականության կիրառումը երեխաների հոգեբանական վիճակի գնահատման և կրթական ծրագրերի արդյունավետության մոդելավորման խնդիրներում» (հայտատու՝ Արման Մանվելի Բաբայան, ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի 3-րդ տարվա առկա ուսուցմամբ ասպիրանտ) թեմայով հայտը երաշխավորել ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված «Դոկտորական հետազոտությունների աջակցության ծրագիր - 2026» մրցույթին մասնակցելու համար (28 կողմ, 0 դեմ, 2 ձեռնպահ):

**1.4** «Հայաստանի Հանրապետության տնտեսության վրա թվային փոխակերպման սոցիալ-տնտեսական ազդեցության գնահատումը» (հայտատու՝ Անահիտ Վահագնի Խեքոյան, ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի 2-րդ տարվա հեռակա ուսուցմամբ ասպիրանտ) թեմայով հայտը երաշխավորել ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված «Դոկտորական հետազոտությունների աջակցության ծրագիր - 2026» մրցույթին մասնակցելու համար (29 կողմ, 1 դեմ, 0 ձեռնպահ):

*ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ*

*ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ*